Ասեն. "Մեք եմք Լուսաւորչի,
Հնազանդ մեր կաթողիկոսի։"
Ղափին մեզ չար յոլով արարեալ,
Վասն այն մեր բանն եղեւ յամեալ.
Բազում դրամ, ոսկի տըվեալ՝
Հազիւ եղեն նմանէ փրկեալ։
Ասէր. "կաթողիկոսն ո՛վ է.
Իմ պատիւս քան զնա մեծ է.
Ամէն Հայոց աշխարհ իմն է.
Նա իմ աշակերտն ալ չէ։"
Անտի ի մեծ Հռոմ գնացեալ
Ուրացողն՝ յոտըս փափին անկեալ.
Իսկ փափին ըզնա յոյժ մեծարեալ,
Դարպաս, ոճիկ նըմա տըվեալ։
Ամ մի բոլոր նա անդ կացեալ
Հռոմայ գահիցըն պատուեցեալ,
Ցոլով դարանս Հայոց կազմեալ
Եւ զմեր դեսպանն փախուցեալ։...,,

Նիկ. Թորոսեվիչ, 1632ին Լեմպերկի քահանայապետական նուիրակին առջեւ պաշտօնապէս կաթողիկէ դաւանութիւն տուաւ, թագաւորին ներկայացաւ, եւ անոր յանձնարարականովը Ցովհ. Խուլ Պատրիարքին հետ 1632ին վերջերը Հռոմ գնաց, ուր շքեղ ընդունելութիւն եղաւ իրենց։ Նիկող. Աղք. իր թեմը դարձաւ, իսկ Ցովհ. Խուլ մնաց Հռոմ։

Կղեմէս կալանոս իւր եռահատոր Հայլատին պատմութեան մէջ Ցովհ. Խուլի մասին շատ անգամ յիշատակութիւն կ'ընէ, եւ կ'աւանդէ թէ անիկայ Հռոմ գնաց, կաթուղիկէ դաւանու-